ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՐԿԱ՝ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ՝ <<ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ >> հասկացության էությունը

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱՆՈՒՇ ՌՈՒԲԵՆԻ ԱՎԱԳՅԱՆ

ՀՀ ԿԳՄՍՆ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ

ԹԻՎ 8 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ԷՄԻՆՅԱՆ

ԱԼԱՎԵՐԴԻ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ..... 4
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 11
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Մարդկանց մեծ մասն աշխարհում այս կամ այն պետության քաղաքացի են, և դա նրանց օժտում է որոշակի լիազորություններով ու իրավունքներով: Քաղաքացի լինելը նաև ենթադրում է որոշակի պարտականություններ, որոնք պետությունն ակնկալում է իր իրավասության տակ գտնվող քաղաքացիներից: Քաղաքացիներն իրենց պետության համար որոշակի պարտականություններ են կատարում և ի պատասխան կարող են ակնկալել իրենց կենսական շահերի պաշտպանությունը: Համենայն դեպս, այդպես պետք է լիներ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ուսումնասիրել «քաղաքացիություն» հասկացությունը:

Հետազոտական աշխատանքի խնդիրն է՝ ներկայացնել, թե պետությունները քաղաքացիների ո՞ր իրավունքներն են պարտավոր երաշխավորել և ինչ պայմաններով, պարզել՝ ի՞նչ է կատարվում մարդկանց հետ, ովքեր այս կամ այն պատճառով չեն օգտվում այն երկրի պաշտպանությունից, որտեղ բնակվում են:

Նախ և առաջ անհրաժեշտ է պատկերացնել՝ իրականում ինչ է նշանակում լինել քաղաքացի կամ ինչ է քաղաքացիությունը: Հարկ կլինի դիտարկել՝ ինչու աշխարհում որոշ մարդիկ չունեն այն երկրի քաղաքացիությունը, որի բնակիչներն են; Քաղաքացիության գաղափարի շուրջ չկա միասնական կարծիք այն հարցում, թե ինչ է դա նշանակում:

Իրավական առումով՝ քաղաքացիության հասկացությունը առնչվում է տվյալ ազգային պետությանը և սահմանվում է նրա օրենքներով, և շատ մարդկանց մոտ քաղաքացիության գաղափարն անմիջականորեն կապվում է հայրենասիրության հետ, հաճախ «լավ քաղաքացի» է համարվում «լավ հայրենասերը»: Այնուամենայնիվ, քաղաքացիութան գաղափարը իմաստային այլ շերտեր ևս ունի. մի կողմից քաղաքացի, մյուս կողմից՝ սուբյեկտ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացիության գաղափարի ծագումը կարելի է գտնել Հին Հունաստանի պատմության էջերում, ուր «քաղաքացիները» նրանք էին, ովքեր իրավունք ունեին մասնակցելու պետության գործերին: Բայց ամենևին էլ բոլորը չէ, որ քաղաքացի էին, մասնա-վորապես կանայք և ստրուկները պարզապես հպատակներ էին;

Նրանց համար, ովքեր քաղաքացի էին, քաղաքացիական արժանապատվությունը քաղաքացիության գաղափարի կարևոր մասն էր կազմում. Շեշտը դրվեց պարտականությունների վրա, որոնք քաղաքացիները պարտավոր էին կատարել:

«Քաղաքացու» իրավական կարգավիճակը մշտապես կապվում էր պետության հետ, այստեղից էլ՝ կապը քաղաքացիության և հայրենասիրության միջև:

Տասնիններորդ դարում ձևավորվեց քաղաքացիության ազատական հայացքը. շեշտվեց քաղաքացիների իրավունքների կարևորությունը. ընտրական իրավունքը սկսեց աստիճանաբար ընդլայնվել, արդարադատությունը և քաղաքական իրավունք-ները բնակչության զգալի հատվածի համար իրականություն դարձան:

Քսաներորդ դարում «սոցիալական քաղաքացիության» կողմնակիցները քաղաքա-ցիական և քաղաքական իրավունքները ճանաչեցին որպես մասն այն ամենի, ինչ քաղաքացիները կարող են ակնկալել պետությունից: Սոցիալական պետության առա-ջացումը մեծապես պարտական է այն մտածողներին, որոնց կարծիքով քաղաքացի-ների իրավունքները պետք է ներառեն նաև նրանց սեփական կյանքի և աշխատանքի պայմանները, ոչ թե սոսկ նրանց մասնակցությունը «բարձր» քաղաքականությանը:

Արդեն բավական ժամանակ գոյություն ունի «բազմաքաղաքացիության» գաղա-փարը, որը թույ է տալիս անհատներին միաժամանակ մեկից ավելի պետության քաղաքացիներ լինել. օրինակ՝ Եվրոպական Միության ձևավորմանը զուգընթաց՝ անդամ պետությունների քաղաքացիները աստիճանաբար ձեռք բերեցին ոչ միայն իրենց սեփական պետության, այլև Եվրոպական Միության կողմից ամրագրվող որոշ իրավունքներ և պարտականություններ:

Մեր օրերում քաղաքացիությունը ընդգրկում է կրթության գաղափարը: Քաղաքացի լինել, չի նշանակում միայն իրավունքներ ունենալ, պարտականություններ կատարել: Իմաստավորվում է այն պնդումը, թե քաղաքացի ոչ թե ծնվում, այլ ձևավորվում են: Օրինակ՝ պատասխանատվությունը և հավատարմությունը հատկանիշներ են, որոնք պետք է ուսուցանվեն և զարգացվեն: Քաղաքացիները պետք է լինեն կրթված՝ այդ բառի ամենալայն իմաստով:

Մարդկանց մեծամասնության պատկերացումը քաղաքացիության մասին ներառում է վերոնշյալ տարրերը, սակայն տարբեր համամասնություններով; Որոշ մարդիկ ընդգծում են «իրավունքների», «պարտականությունների» տարրը, մինչդեռ իմ խորին համոզմամբ, մեր հասարակության կողմից պետք է առավել կարևորվեն «հայրենասիրությունը», «քաղաքացիական արժանապատվությունը>>:

Պետությունը հանդիսանում է Մարդու իրավունքների պաշտպանության հասցեատերը: Պետության առաջնային և կարևորագույն գործառույթներից է՝ ապահովել մարդկանց բնականոն համակեցությունն այնպես, որ նրանք կարողանան օգտագործել հասարակության տված հնարավորությունները:

Թ. Հ. Մարշալը իր <<Քաղաքացիությունը և սոցիալական դասակարգը>> գրքում (Քեմբրիջի համալսարանի հրատարակություն, 1950թ.) առաջ է քաշում այն դրույթը, որ քաղաքացիությունն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ երաշխավորում է երեք հիմնական իրավունքների պաշտպանությունը: Նա տարբերակում է երեք բաղադրիչ. քաղաքացիական բաղադրիչ, որն ընդգրկում է անհատի ազատությանն առնչվող իրավունքները, քաղաքական բաղադրիչ, որը ներառում է, օրինակ, քաղաքական իշխանության իրականացմանը մասնակցելու, ընտրելու և ընտրվելու իրավունքը, սոցիալական բաղադրիչ, որն առնչվում է արժանավայել կենսամակարդակի ապահովման,բնակարանի, ինչպես նաև կրթության, առողջության իրավունքներին:

Տարբեր ժողովուրդներ տարբեր կերպ են պատկերացնում մարդու իրավունքների և պետության փոխհարաբերությունները: Պատմությունը ցույց է տալիս, որ հիմնականում հասարակություններում տեղի ունեցած ներքին պայքարի արդյունքում է, որ պետություններում իշխանության կրողները ստիպված են լինում ստանձնել մարդու իրավունքների պաշտպանի և երաշխավորի դերը: Այդ պայքարի արդյունքում է, որ

մարդիկ պարտադրեցին պետություններին ճանաչել իրենց անձնական իրավունքները՝ ընդունվեցին հռչակագրեր, նորմատիվ իրավական փաստաթղթեր, սահմանադրություններ: Ստորև ըստ փուլերի ներկայացվում է մարդու իրավունքների, ազատությունների պաշտպանության կայացման ընթացքը

Առաջին փուլ

Կյանքի իրավունք

Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք

Մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգանքի իրավունք

Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք

Անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք

Երկրորդ փուլ

Սեփականության իրավունք

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք

Աշխատանքի կամ աշխատանքի ազատ ընտրության իրավունք

Աշխատանքից՝ հանգստի իրավունք

Երրորդ փուլ

Հանրային կառավարմանը մասնակցելու իրավունք՝ ընտրելու պետական մարմիններում քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց և ընտրվելու այդպիսի պաշտոններում (ընտրական իրավունք)

Հավաքներ, ցույցեր, հրապարակային ելույթներ կազմակերպելու իրավունք

Քաղաքական (կուսակցություններ) և հասարակական կազմակերպություններ ստեղծելու, դրանց անդամագրվելու իրավունք և այլն:

Չորրորդ փուլ

Ժողովրդավարական հասարակություններում խորհրդարանում ձևավորված առանձին փոքրամասնությունների իրավունքներ.

խորհրդարանում քաղաքական փոքրամասնության ներկայացվածությունը

խորհրդարանում ազգային փոքրամասնությունների ներկայացված լինելը

խորհրդարանում կանանց ներկայացված լինելը

2015թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանում տեղի ունեցան սահմանադրական փոփոխություններ: ՀՀ Սահմանադրության երկրորդ գլուխը նվիրված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին:

ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է.

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:
2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն <u>ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:</u>
3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հանրային իշխանությունը, ի դեմս պետության, պարտավոր է՝

1. Հարգել և պաշտպանել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները:
2. Կանխել Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների ու ազատությունների խախտումներն այլ անձանց կողմից, իսկ այդպիսի խախտումներ լինելու դեպքում այդ խախտումները կատարած անձանց ենթարկել պատաս-խանատվության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիության իրավունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածով, որը ներկայացված է ստորև՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:
2. Յուրաքանչյուր երեխա,որի ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:
3. Ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատելու պահից ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք:

4. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացման կարգը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման այս հիմքերը, ինչպես նաև դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով:
5. Հայաստանի Հանրապեետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիությունից: Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող զրկվել քաղաքացիություն փոխելու իրավունքից:
6. Սույն հոդվածով սահմանված իրավունքների իրականացման կարգը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման այլ հիմքերը, ինչպես նաև դադարեցման հիմքերը սահմանվում են օրենքով:
7. Սույն հոդվածի 2-4րդ մասերով, ինչպես նաև 5-րդ մասի 2-րդ նախադասությամբ սահմանված իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության , հանցագործությունների կանխման կամ բացահայտման, ինչպես նաև այլ հանրային շահերի պաշտպանության նպատակով:
8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքների հիման վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո են:

Մարդու իրավունքների և քաղաքացիների պարտականությունների ուսմունքի միջև կա երկու կապող օղակ: Այն փաստը, որ յուրաքանչյուր անհատ օժտված է մարդկային անկապտելի իրավունքներով, չի արտոնում նրան վարվելու այնպես, ինչպես կամենում է: Չի կարելի հատել այն սահմանը, որից այն կողմ մեկ այլ անհատի իրավունքներն են: Քաղաքացիներից պահանջվում է հարգել այլոց մարդկային իրավունքները:

Քաղաքացիության գաղափարն էապես առնչվում է հասարակության անդամության հետ: Քաղաքացի լինելը շատ ավելին է, քան պարզապես որևէ տարածաշրջանի բնակիչ լինելը: Քաղաքացին այն հասարակության անդամ է, որով բնակեցված է տվյալ տարածքը, և եթե պետք է կառուցվի այնպիսի հասարակարգ, որտեղ հարգվում են մարդու իրավունքները, ապա սահմանափակում է դրվում այդ հասարակության ներսում բնակվող քաղաքացիների վարքագծի վրա:

Կարելի է ասել՝ քաղաքացիությունը պահանջում է այնպիսի վարքագիծ, որի արդյունքում հասարակությունն ավելի հարգալից կլինի մարդու իրավունքների նկատ-

մամբ: Կարևորություն է ձեռք բերում այն հարցը, որը վերաբերում է այն անհատներին, ովքեր այս կամ այն պատճառով չեն օգտվում քաղաքացիության ընձեռած առավելություններից. անհատները հաճախ ունեալով փաստացի քաղաքացիություն այն երկրում, որտեղ ապրում են, իրականում զրկված են հասարակական գործերին մասնակցության հնարավորությունից:Ըստ Մ. Գանդիի

հասարակության «քաղաքակրթության մասին պետք է դատել ըստ փոքրամասնությունների նկատմամբ նրա վերաբերմունքի»[1;364]:

Մեր աշխարհը աստիճանաբար վերածվում է հսկայական շուկայի: Համընդհանրացման գործընթացը ուղեկցվում է հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնմամբ, ֆինանսական շուկաների փոխկապվածությամբ, ֆինանասական հոսքերի աճով, առևտրի և ներդրումների առջև դրվող ազգային խոչընդոտների նվազմամբ: Խնդրի երկրորդ կողմը ծավալվող համընդհանրացման հետևանք է՝ ներառյալ աշխատանքի և տեղաշարժման նոր ձևերը, ինչը հանգեցնում է այն բանի, որ ամբողջ աշխարհում զգալի թվով մարդիկ, ապրելով արտերկրում, չեն կարող դիմել պաշտոնական քաղաքացիություն ստանալու համար: Այդ մարդկանց թվին են պատկանում փախստականները, վտարանդի աշխատավորները, ժամանակավոր բնակիչները, նույնիսկ նրանք,ովքեր որոշել են բնակություն հաստատել մեկ այլ երկրում:

Շատ վտարանդիներ, քաղաքական ապաստան փնտրողներ, փախստականներ Եվրոպայում դիմակայում են չափազանց դժվարին իրավիճակների և ենթարկվում են իրենց հիմնարար իրավունքների և արժանապատվության խախտումների:

Փախստականներն ու քաղաքական ապաստան հայցողները հարկադրված են լքել իրենց տները, երկրները և ընտանիքները՝ փրկվելու համար պատերազմից, հետապընդումից կամ սպառնալիքներից: Քաղաքական ապաստան հայցողները և փախստականները կազմում են առանձին խոցելի խումբ,որի կարգավիճակը սահմանվում ու պաշտպանվում է Փախստականների կարգավիճակի մասին 1951 տվականի Ժնևյան համաձայնագրով:

Այնուամենայնիվ,եվրոպական երկրների մեծ մասն այժմ ունի օրենսդրություն,որը թույլ է տալիս ներ-գաղթյալներին կալանքի տակ պահել օդանավակայաններում և

ոստիկանության սահմանային բաժանմունքներում՝ հաճախ անտեսելով նրանց իրավունքները: Մերժված դիմումներով ապաստան հայցողների արտաքսումը տարածված երևույթ է, երբեմն այն ուղեկցվում է նվաստացուցիչ ձևերով:

Գոյություն ունի քաղաքացիության նոր՝ ներկայումս ի հայտ եկող մակարդակ, որն անվանում են աշխարհաքաղաքացիություն:Այն դիտարկվում է որպես համընդհանրացման ենթադրյալ դրական կողմ: Կա այնպիսի մոտեցում, որ սոցիալական և մշակութային համընդհանրացումը չի հանգեցնի միատարրացման, այլ արդյունքում կստեղծվեն նոր վարքագիծ և ինքնություն ունեցող հասարակություններ: Կարծում եմ նման մոտեցումը վտանգավոր է, քանի որ յուրաքանչյուր երկիր ունի իր յուրահատկությունները, իր մշակույթը, իր իրավունքը լինել այնպիսին, ինչպիսին կա:

Համոզված եմ, որ առկա մարտահրավերների պայմաններում ՀՀ քաղաքացի լինելը չի նշանակում միայն հանդիսանալ հասարակության անդամ, ով ունի Սահմանադրությամբ որոշված իրավունքներ և պարտականություններ: ՀՀ քաղաքացին պետք է գիտակցի հայ ժողովրդի ու հայոց պետության դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, ունենա ազգային մտածողություն և ինքնագիտակցություն, մտահոգվի ազգային պետական խնդիրների լուծմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդյունքում պարզ դարձավ,

1. քաղաքացիությունը բարդ և բազմակողմանի իրողություն է, որը պետք է դիտարկել իր քաղաքական և պատմական համատեքստում: Քաղաքացիության գաղափարն իմաստ ունի միայն հասարակության կամ քաղաքական համակարգի իրական կարիքների առկայությամբ:
2. ժողովրդավարական երկրներում քաղաքացիությունը հատկապես վերաբերում է իրավունքների և պարտականությունների համակարգում քաղաքացիների ակտիվ մասնակցությանը, ինչը քաղաքացիների կոչումն է: Պետության առաջնային և կարևորագույն գործառույթներից է.

   2.1 ապահովել մարդկանց բնականոն համակեցությունը,

   2.2 պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պատրիցիա Բրենդեր, Ռուի Գոմես … Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկ. Եվրոպայի Խորհուրդ
   Կողմնացույց.-Ք. Վանաձոր, ՀՍԻԿ, 2006.- 434 էջ
2. Ալեքսանյան Ա.,Գալստյան Ն.,
   Սիմոնյան Տ. «Հասարակագիտություն» առարկայի ուսումնաօժանդակ ձեռնարկ:11- րդ դասարան.- Եր.:
   Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, 2020.-448 էջ
3. www.arlis.am 12.09.2022թ.

ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով) պաշտոնական տեղեկագիրք

4. Աֆորիզմներ(Պ.Պ. Պետրով, Յա.Վ.Բերլին).Եր.:Հայաստան,1989.-702 էջ